

*
* *

Դարդը՝ սրտիս, աղբաւ ու խեղճ, ցուպը՝ ձեռիս,
գլխակոր.
Շատ տարիներ պանդուխտ եղած՝ նորէն դարձայ հայ-
րենիք.
Կեանքի բեռով մէջքս ծռած, միտքս շուան ու մոլոր,
եօթը սարէն, եօթը ծովէն դարձայ անուշ հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսայ մանկութ ընկերիս.—
Ա՛խ, ընկեր ջան... կարօտ սրտով նրա առաջ վազեցի.
Ասի.—«Բարձր, անգին ընկեր. միթէ ինձի չես ճանչեր...»
Ախրը ես շատ փոխուեր էի... չը ճանաչեց նա ինձի:

Յուպը ձեռիս գեղը մտայ, անցայ ետիս տան
ճամբով.
Տեսայ ետս վարդը ձեռին՝ մէնակ կանգնած դրան մօտ.
Ասի,—«Բ՛արիկ, ազիզ տեսքիդ արժանացայ ես բարով...»
Նա էլ ինձի չը ճանաչեց... աղբաւ էի ու փոշոտ:

Դարդը սրտիս հասայ մեր տուն, տեսայ ծերուկ—
խեղճ մօրս.
Ասի.—«Նանի, ճամբորդ մարդ եմ. գիշերս ինձ հիւր
կ'ընդունես».
Ա՛խ, մէրիկ ջան... վզովս ընկաւ, սրտին գրկեց ու լա-
ցեց.—
—«Ա՛խ, բալնայ ջան, զարիք բալնայ, էդ դճն ես...»

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ